ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2
«ԱՎԻԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԱՈՒԿ-ԳՀԱՊՁԲ-26/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ մեկնարկ «06» ապրիլի 2026թ.
ավարտ «17» ապրիլի ժամը՝ 16:00

Նիստի անցկացման վայրը՝ ք. Երևան 1149 «Զվարթնոց» օդանավակայան

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Հենրիկ Սարգսյան - ընկերության դասախոս (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝
Վահե Սայադյան - ընկերության իրավաբան (ԳՊ/ԳԱ)
Վիկտորյա Ավետիսյան - ընկերության մեթոդիստ (ԳՊ/ԲԱ)
Մարզպետ Հակոբյան - ընկերության դասախոս (ԳՊ/ԲԱ)

Բացակայում էր՝
Էմմա Վարդանյանց - ընկերության գլխավոր տնտեսագետ (ԳՊ/ԳԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝
Նարինե Կիրակոսյան - ընկերության գնումների մասնագետ

1. **Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտերի բացման և հայտ ներկայացրած մասնակիցների վերաբերյալ**

(Հ. Սարգսյան)

1.1 «ԱՈՒԿ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են սահմանված ժամկետում, որը համընկել է հայտերը ներակայացնելու վերջնաժամկետին՝ 2026 թվականի ապրիլի 6-ին ժամը 17:00-ին, ք. Երևան 1149 «Զվարթնոց» օդանավակայան հասցեում:

1.2 «ԱՈՒԿ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N/N	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«Սոլար Հոլդինգ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն., Թաիրով փ. 46Լուսավորչի փող., 9 շենք	solarholdingllc@gmail.com հեռ.+ 37493222673
2	«ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց փ. 42-44	info@ecoville.am, ruzanna.seyranyan@ecoville.am հեռ. 077-777-886, 077-25-73-64
3	«ՖՐԻՆԵՐՋԻ» ՍՊԸ	ք. Երևան Ազատության 27	info@freenergy.am հեռ.+374 11 20 99 20
4	«Սոլար ցենտր» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին,	info@solarcentre.am

		Ե. Չարենցի 1/1	հեռ.091496009
5	«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ	Ք. Երևան , Կորյունի 8/4	հեռ.043100007
6	«ՈՒԱՆ ՓՈՎԵՐ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Աբելյան 8	Հեռ.077939417

Ընդունել որոշում՝ կողմ-4, դեմ-0

2. «ԱՈՒԿ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգին էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջներին համապատասխան կազմած լինելու և յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

(Հ. Սարգսյան)

2.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	**Առաջարկած գինը**		
	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	**ԱԱՀ****	**Ընդհանուր գինը**
Չափաբաժին 1: 40 կՎտ հզորության արևային կայան (տեղադրմամբ			
«Սոլար Հոլդինգ» ՍՊԸ	5 633 333.333	1 126 666.667	6 760 000
«ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ	6 750 000	1 350 000	8 100 000
«ՖՐԻՆԵՐՋԻ» ՍՊԸ	6 990 000	1 398 000	8 388 000
«Սոլար ցենտր» ՍՊԸ	7 075 000	1 415 000	8 490 000
«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ	7 491 300	1 498 260	8 989 560
«ՈՒԱՆ ՓՈՎԵՐ» ՍՊԸ	7 571 191.67	1 514 238.33	9 085 430

2.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում է /ճիշտ է/:

Ընդունել որոշում՝ կողմ-4, դեմ-0

3. Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության և հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցի վերաբերյալ.

(Հ. Սարգսյան)

3.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաստեթների ուսումնասիրման արդյունքում պարզվել է հետևյալը.

«ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հավելված 2-ում լրացված չէ մասնակցի անվանումը, հետևաբար, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ մասնակցի հայտը ենթակա է մերժման:

«Սոլար Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում.

- իրական շահառուների տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը 2025 թվականի է, անհրաժեշտ է ներկայացնել 2026 թվականի հղումը:

-բացակայում է հրավերով պահանջվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1-ի:

«ՖՐԻՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ սահմանված ձևաչափով:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ 09.04.2026 թվականին ընթացակարգը կասեցնել և առաջարկել **«Սոլար Հոլդինգ» ՍՊԸ-ին և «ՖՐԻՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին** ծանուցումը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 10.04.2026 թվականը/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել «ԱՈՒԿ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի purchase.aviatrainingcenter@gmail.com էլ. փոստին:

3.2 Սահմանված ժամկետում նշված անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակիցների հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում հայտերը կգնահատվի անբավարար և կմերժվեն:

3.3 Հանձնաժողովի հաջորդ նիստի անցակացման օր և ժամ սահմանել 17.04.2026 թվականը, ժամը 16:00-ն:

Ընդունել որոշում՝ կողմ-4, դեմ-0

17.04.2026 թվականին ժամը 16:00-ին հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

4. <u>Տեղեկատվություն՝ «ԱՈՒԿ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման մասին</u>

(Հ. Սարգսյան)

4.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակիցներ «Սոլար Հոլդինգ» ՍՊԸ-ի և «ՖՐԻՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 09.04.2026 թվականինն ծանուցվել է վերջիններիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է վերջիններիս կողմից:

Ընդունել որոշում՝ կողմ-4, դեմ-0

5. <u>Տվյալներ՝ «ԱՈՒԿ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգի՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման վերաբերյալ</u>

(Հ. Սարգսյան)

5.1 Հիմք ընդունելով կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ ճանաչել

հետևյալ կազմակերպություններին.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Ընտրված մասնակից	Այդպիսին չճանաչված մասնակից
1	**40 կվտ հզորության արևային կայանի (տեղադրմամբ)**	«Սոլար Հոլդինգ» ՍՊԸ	«ՖՐԻՆԵՐՋԻ» ՍՊԸ

Ընդունել որոշում՝ կողմ-4, դեմ-0

6. *Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

(Հ. Սարգսյան)

6.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

6.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

Ընդունել որոշում՝ կողմ-4, դեմ-0

7. «ԱՈՒԿ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արդյունքների հաստատման(մրցույթի արդյունքների ամփոփման) մասին

(Հ. Սարգսյան)

7.1 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

7.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

7.3 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունել որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հենրիկ Սարգսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Սայադյան

Վիկտորյա Ավետիսյան

Մարզպետ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նարինե Կիրակոսյան